





ԱՊԱԳԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ



A
T
13897

«Եւ դուն՝ ո՛վ Դանիէլ՝ այս խօսքերը գոցէ՛, ու գիրքը կնքէ՛ մինչեւ վերջին ժամանակը. շատերը ուշադրութեամբ պիտի կարդան, և գիտութիւնը պիտի շատնայ»

Գ.Ն. ԺԲ. 4

Դարերով կնքուած մնացին ոմանք այն մարգարէութիւններէն զոր Տէրը Իր մարգարէին՝ Դանիէլի յայտներէր: Սակայն, վերջին ժամանակին մէջ, ուշադիր հետազօտիչը պիտի գտնէր բանալին՝ որով այս գիրքը կատարելապէս պիտի բացուէր՝ և հետեւաբար, անոր նկատմամբ գիտութիւնը մեծապէս պիտի աճէր: Երկու հազար հինգ հարիւր տարի առաջ, Աստուած մարգարէին ձեռքով գրել տուեր էր՝ խորհրդանշաններով կամ մարգարէական լեզուով՝ կարեւոր ճշմարտութիւններ ետքի օրերուն Իր զաւակացը համար: Վերջին ժամանակին մէջ այս մարգարէութեանց բացուիլը պիտի ոչ միայն ի լոյս հանէր Աստուծոյ ժողովուրդին համար կարեւոր ճշմարտութիւններ, այլ՝ այս գիտութեան յայտնուիլը պիտի նաև ծառայէր իբրև մին աշխարհի մօտալուտ վախճանին նշանակալից նշաններէն: Բուն նպատակն այս լոյսի և աճած գիտութեան՝ կը գտնենք հետեւեալ համարին մէջ, — «Շատերը պիտի մաքրուին, ու պիտի ճերմկնան ու պիտի փորձուին. բայց՝ ամբարիշտները ամբարշտութիւն պիտի ընեն, ու բնաւ մէկ ամբարիշտ մը պիտի չհասկնայ, այլ իմաստունները՝ պիտի հասկնան » Դան. ԺԲ. 10:

Պատմութեան մէջ կը գտնենք սքանչելի բազմատոթիւն մը որ կրնայ յոյժ պատշաճօրէն գործածուիլ՝ լուսաբանելու դայս: Հնութեան քաղաքակիրթ երկիրնե-

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

բուն մէջ՝ Եգիպտոս գլխաւոր դիրք մը կը գրաւէր Մովսէսի օրով : Եգիպտացիք նշանաւոր էին իրենց իմաստութեան համար : «Ու Մովսէս Եգիպտացւոց բոլոր իմաստութիւնովը վարժուեցաւ, և զօրաւոր էր իր խօսքերովը և գործքերովը :» Գործք է. 22 : Երբայցի գերիներուն բունադատեալ աշխատանքը անոնց հոյակապ շինուածոց կառուցմանը կը գործածուէր : Սակայն, Եգիպտացւոց վաղեմի փառքէն ամէն ինչ որ այժմ կը մնայ՝ դամբաններն են ուր կ'ամփոփուէին իրենց մեռեալք, և տաճարները՝ զոր անոնք կը կանգնէին իբրև սրբարաններ իրենց շատուածոց համար : Նեղոսի վրայ ճամբորդած միջոցիս, զարմացեր էի տեսնելով՝ հարիւրաւոր մղոններով անոր ափերը զարդարող մեծամարմին բուրգերն ու վիթխարի տաճարները : Արդարեւ՝ ժամանակին աւերները կ'երեւան շատ մը հսկայ շէնքերու վրայ, ուր ընդարձակ աւերակներ լոկ մնացեր են՝ անոնց նախկին մեծութիւնը պատմող . . . : Այդ պատկառելի յիշատակարաններէն շատերը հիմա անապատին մէջ կ'ըման լուռ և ամայի՝ մասամբ աւազի մէջ թաղուած : Այդ շէնքերուն թանձր որմերը գեղազարդուած են խել մը շնաշխարհիկ նկարներով և արձանագրութիւններով, յոյժ ճարտարօրէն քանդակուած կարծր վէմի վրայ : Մուսէոններու մէջ տեսայ ո՛չ միայն մոմիաները նախկին Եգիպտոսի թագաւորաց այլ և՛ անոնց մեծ քարէ շիրիմներէն հանուած շքեղօրէն երփնանկար՝ և հոծօրէն գրուած պապիրոսի պատառներ : Այդ արձանագրութիւնք՝ թէև բազմաթիւ, բայց անխօս վկաններ էին երկար ատենէ ի վեր, քանզի ոչ ոք կարող էր ճշգրտօրէն թարգմանել զանոնք :

Դարերով՝ նշանաւոր հմուտ մարդիկ ամենամեծ հնարին ջանքերն ի գործ դրին կարդալու այն խորհրդաւոր մեհենագրութիւնները : Անոնք փորձեցին կերպով մը արտադրել հիմք մը՝ վերահասու ըլլալու համար բուն իմաստին այս արձանագրութեանց, և սուր մտքեր՝ այս նիւթին վրայ մեծահատոր գրքեր գրեցին, սակայն իրենց նրբահիւս տեսութեանց ունայնարանութիւնն ակներև էր


միշտ . — բուն բանալին կը պակսէր : 1799ին՝ Ռօզէթթա քաղաքին առջեւ պատնէշի մը շինութեան պահուն , աստուածային նախախնամութեամբ գտնուեցաւ՝ հին և մասամբ ծայրակոտոր պասալդ քարէ կոթող մը : Ան կը պարունակէ երեք լեզուով գրուած հրամանագիր մը , որուն ստորեւ Յունարէն ըլլալուն՝ գիտունք կրնային դիւրաւ հասկնալ : Վերջին տողը կը յայտարարէր , «Թող այս հրամանագիրը փորագրուի կարծր քարէ կոթողի մը վրայ՝ սրբազան , հասարակ , և Յունական լեզուներով » : Սրբազան լեզուն՝ քուրմերուն գործածած մեհենագրերն էր , և հասարակ , կամ ժողովրդական լեզուն՝ սովորաբար խօսուած բարբառն էր : Այս յայտարարութիւնը կը փարատէր ամէն տարակոյս . վերի երկու բնագիրք՝ տակնին — Յունարէնին — յար և նման էին : Գիտունք , Յունարէն հասկնալնուն , հաստատուն հիմք մը ունէին՝ որուն վրայ կրնային հիմնել մեհենագրոց ընթերցմունքը : Ու գործի սկսան : Ուր և իցէ դժուարութիւն կը պատճառէին Յունարէն բացատրութեան մը համարժէք եղող տառերը , անոնք կարող էին քակել բառը կամ նախադասութիւնը՝ բազդատելով համապատասխան գրերու որ յաճախողէս են յիշատակարանաց արքայական զինանշաններու վրայ ուր թագաւորաց անունները կը ցցուին , ձուածեւ օղակներով շրջանակուած : Այս գործը շարունակուեցաւ այնպիսի ջանքով և եռանդով որ այսօր՝ ատենով ա՛յնքան անհասկնալի այդ արձանագրութիւնք և պապիրոսի պատատք հասկցուած են : Երբեմնի այնքան մունջ այդ վկայք՝ հիմա պերճախօսօրէն կը հաստատեն Եգիպտոսի հին պատմութիւնը : Ռօզէթթայի յիշեալ քարը , որ Բրիտանական Մուսէոնին մէջ խնամքով կը պահուի , երկար ատենէ ի վեր անձկանօք փնտռուած բանալին էր դարձեր , անգամ մը եւս յայտնելով մարդկային մտքին՝ ալեւոր հնութեան մը գանձերը , ու այսպէս՝ մեռեալ յիշատակարանք գոգցես հոգի ու կեանք են ստացեր :

Բազում դարերէ ի վեր՝ հին Եգիպտոսի գիտութիւնն ու լեզուն իսպառ կորսուեր էին : Կրանիդ քարերու վրայ

փորագրուած ըլլալնուն պատճառաւ դարերու փոթորիկներուն սողացող՝ մեհննագրերով ծածկուած ամբողջ պատեր միշտ անարժէք կը թուէին, քանզի չէին կարգացուեր: Այսու ամենայնիւ, Աստուծոյ նախախնամութեան մէջ էր որ այս «սահմանաքարեր»ը քակուէին վերջին օրերը: Երեւելի պատմիչ մը հետեւեալը կը յայտարարէ, «Մեր դարը, նշանաւոր՝ իր զարմանալի գիտերուն համար, իրեն վերապահեր էր ինչ որ կրնայ նկատուիլ իրրեւ մին մարդկային մտքին է՛ն հոյակապ յաջողութիւններէն, և անհունապէս բարեբախտ գիւտը՝ հին Եգիպտոսի վերաբերմամբ, այսինքն Եգիպտական մեհննագրութիւնները քակող բանալիին գիւտը: Ասի վերստին բացաւ մարդկային մտքին լեզու մը՝ որ անթափանցելիօրէն ծածկուած էր մարդոցմէ՝ հազար տարիէ ի վեր, ըստ որում Եգիպտոսի քուրմերուն կտքինը այդ լեզուին է՛ն վերջի հասկցողն է եղած կրնայ ըսուիլ: Եւ գրեթէ առասպելական աշխարհի մը անցեալը, կարծես մոգական գաւազանի մը հպումէն, բացուեցաւ, եւս քան զեւս հասկնալի դառնալով միշտ՝ մանրամասնեալ ու կենդանի պատկերներովն՝ հանուած յաչս խուզարկուին, որ, հիասքանչ կը նայի անոնց»՝ Վ. Օնիկե, Ընդհ. Պատ. Հատ. Ա., էջ 268:

Եթէ նախկին Եգիպտացւոց մեհննագրութիւնները քակող բանալիին գիւտը անցեալ դարուն ամենափայլուն յաջողութիւններէն մին կը համարուի, անհունապէս աւելի մեծ կարեւորութիւն ունի՝ նուիրական մարգարէութեան աստուածայնօրէն յայտնուած խորհրդանշանները բացատրող բանալիին գիւտը. — գիւտ՝ զոր Դանիէլ մարգարէն գուշակեր էր, Եգիպտոսի բուրգերուն, կոթողներուն և տաճարաց արձանագրութիւնք՝ թարգմանաւ փառաց մէկ առջտ պատկերը լոկ կը յայտնեն մեզի: Այդ դէպքերը՝ կատարուելնէն յետոյ՝ մարդկային ձեռքերով արձանագրուեր էին կարծր վէժերու վրայ: Թէպէտ այդ սքանչելի այլարանական պատկերք մեզի կը ներկայացնեն մէկ ճշգրիտ տեսարանը հին Ե-

գիպտացւոց բարձրուն, սովորութեանց, կրօնքին,
 ռազմական արշաւանաց, ևն., այսու ամենայնիւ խել
 մը բաց թողուած տեղեր կան արձանագրութեանց մէջ,



ՔԱՐԻՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՔ ԼԵՋՈՒՆԵՐՈՎ


ու յաճախ փառասէր թագաւորք՝ խարդախօրէն իրենց
 անունները կը դնէին այլոց կատարած գործերուն տակ...
 Եւ թէպէտ կարգացուած են այդ յիշատակարանք, սա-
 կայն վերջապէս սոսկ արձանագրութիւնք կը մնան գե-
 րեզմաններէն, ուրկէ մահուան արտաշնչութիւնը կ'ելլէ,

և որոնց մէջ անապատին աւազները կը կուտակուին շարունակ :

Ինչքան շատ տարբեր է մարգարէական հաստատագոյն խօսքը : Խորհրդանշանական լեզուին բուն բանալին գտնուելուն վրայ, աստուածային գիտութեան անսահման գանձերը կը բացուին մեզի : Մահուան բորբոսեալ բուրմունքը չէ որ կը ծածանի դէպ ի մեզ, այլ այստեղ կը գտնենք Աստուծոյ թարմ՝ կազդուրիչ Հոգին, որ ներշնչեց մարգարէները իրենց զարմանալի տեսիլքն'ը գրելու : Ամենագէտն Աստուած՝ աշխարհի թագաւորութեանց պատմութիւնը գրել տուաւ առաջուց, նախ քան անոնց երեւալն իսկ բեմի վրայ : Այլագան մետաղներէ բաղկացած միակ արձան մը բաւ է Անոր ձեռացը մէջ՝ երկրաւոր վեհապետի մը յայտնելու ապագայ թագաւորութիւններն իրենց մշտննուազ փառքով, ցուցուած նախ՝ ոսկիով, ապա արծաթով, պղինձով, երկաթով, մինչեւ վերջապէս կ'երեւայ դիւրարեկ կաւն որ պիտի քշուէր սաստիկ մեծ փառքէն որով Քրիստոս սիտի գայ Իր թագաւորութիւնն հաստատել : Դանիէլի երկրորդ գլխուն մէկ քանի համարներուն մէջ՝ Տէրը մեզի կուտայ ոչ միայն մէկ ամբողջական ուրուագիծն այս աշխարհի պատմութեան, այլ և կը ներկայացնէ ինչ որ ոչ ոք երբէք կրնար երեւակայել — մէկ ուրուանկարն Իր ապագայ և յաւիտենական իշխանութեան : Աստուծոյ սուրբ ժողովուրդին հարստահարիչներուն գոյութիւն ունենալէն դարեր առաջ, անոնք ճշգրիտ կերպով նկարագրուեր են, ու մեզի ծանուցուած է անոնց վերջնական ջնջումը՝ երբ Տէրը գայ փրկելու իրենները : Ներշնչեալ մարդիկ մղուեցան հաստատարօրէն նկարագրելու ապագայ պատմութիւնը՝ յարմար խորհրդանշաններով, դէպքերուն տեղի ունենալէն հարիւրաւոր տարիներ առաջ, այնպէս որ՝ երբ այս բաները կատարուէին, մասնաւորապէս վերջին ժամանակին մէջ ապրող Իր զաւակացը հաւատքը կարենար ա՛մուր դառնալ ինչպէս կարծր վէմը, քանզի անոնք պիտի կարողանային ճանչնալ Աստուծոյ մասն ու Իր կնիքը և զինանշանը՝ պատմութեան




ΚΛΕΟΠΑΤΡΑ




- 1 - ρ
- 2 - λ
- 3 - ε (ϛ)
- 4 - ο
- 5 - φ
- 6 - κ
- 7 - ρ
- 8 - λ
- 9 - κ
- 10, 11

II



ΠΤΟΛΕΜΑΙΟΣ



- 1 - φ
- 2 - ρ
- 3 - ο
- 4 - λ
- 5 - υ
- 6, 7 - κλ (κλ)
- 8 - υ

արձագանքն ըլլալուն մէջ մարգարէութեան : Ու երբ այս փորձառութիւնը տայ անոնց այսպիսի հաստատուն հիմունք մը , յայնժամ Աստուած այնպէս կ'օժէ իրենց աչքերն որ անոնք տեսնեն նոր և յաւերժական փառքն իր ազգայ երկնային թագաւորութեան , քան թէ յարաթարշամ փառքերն այս աշխարհի թագաւորութեանց . . . Անոր մասին միայն՝ որ ատենները և ժամանակները կը փոխէ , որ թագաւորութիւններ կը վերցընէ ու թագաւորութիւններ կը դնէ , որ իմաստուններուն իմաստութիւն կուտայ և հանճարեղներուն գիտութիւն , Անոր մասին լոկ՝ կրնայ ըսուիլ , «Խորունկ ու ծածկուած բաները ինքը կը յայտնէ , մութի մէջ եղածը գիտէ , ու լոյսը Անոր քովը կը բնակի » Դան . Բ . 21 , 22 :

Հմուտ մարդիկ դարերով ջանացին կարգալ շատոնց ի վեր անցած ազգերու անհետացած տօքիւմանները (յիշատակագիր) : Թէպէտև իրենց ջանքերն ամենատարօրինակ բաներն ըսել տուած ըլլան մեհենագրոց , բայց և այնպէս անոնք չդադրեցան շարունակելէ իրենց հետազօտութիւնները՝ մինչև բանային գանուեցաւ և բնագիրը լուծուեցաւ : Երանի՛ թէ աշխարհի գիտունք կարենային ունեցած ըլլալ այնքան շնորհք և համբերութիւն՝ աստուածային մարգարէութեան խորհրդանշանական լեզուն կարգալու մէջ , արդարև լեզու մը՝ որ ոչ թէ քարերու վրայ , այլ իր կենդանի պատգամներուն մէջ է գրուած , որոնց հրաշալի պահպանումը պէտք է անհունապէս աւելի հիացում արժարժէ քան պահպանումն յիշատակարաններու վրայի արձանագրութեանց , ըստ որում այս վերջնոց հնութիւնը չի գերազանցեր առաջնոց հնութիւնը , մինչդեռ մարգարէական կենդանի խօսքին պարունակութիւնք կը գերազանցեն յիշատակարաններու արձանագրութեանց նիւթը այնքան՝ որքան երկինք աւելի բարձր է քան ամենաբարձր բուրգը . . . :

Այսու ամենայնիւ , այն որ աշխարհի իմաստունք դժբաղդարար կը քննադատեն , կամ ինչ որ արհամարհանօք կը մերժեն ու կը խեղաթիւրեն — Վերին խորա-

խորհուրդ Իմաստութիւնը — պէտք է Աստուծմէ յայտնուի աշխարհի կարծեցեալ յիմարներուն, ոչ թէ որպէս զի հպարտանան անոնք, այլ մանաւանդ որ Աստուած միայն փառաւորուի, և որպէս զի ամօթահար ըլլայ աշխարհի իմաստութիւնը. . . : Ա. Կոր. Ա. 27 :


Դանիէլի կամ Յովհաննու մարգարէական խորհրդանշանները բացատրող բանալին երկրին տակէն հանուելու պէտք չունէր (և թէ մանաւանդ՝ ծայրակոտոր վիճակի մէջ,) ինչպէս էր Ռօզէթթայի քարը, այլ՝ պէտք էր ամբողջապէս գտնուէր Ս. Գրքի՛ն իսկ մէջ : Դժուարութիւնն հոն էր որ մարդիկ Աստուածաշունչը կը քննէին՝ սխալներ պրպրտելու համար, կամ մարդկային աւանդութեանց հաւատալով՝ քան թէ անկեղծ նպատակաւ երեւան հանելու անոր ճոխ գանձերը զիտութեան : Մարմնաւոր Իսրայէլացիք, տաղանդաւոր ժողովուրդ մը արգարե, Հին Կտակարանը կը կարդային՝ Մովսիսական քօղն ունենալով սրտերնուն վրայ, այնպէս որ կուրցեր էին Ս. Գրոց բուն իմաստին վերահասու ըլլալու մասին, և՛ Բ Թեա. Բի մէջ գուշակուած հաւատուրացութեան պատճառաւ՝ դաւանանքով Քրիստոնէից մէջ եւս Ս. Գիրքը աւելի լաւ չէ՛ր հասկցուեր, Դարերով այս Գիրքը ժողովուրդէն պահուեցաւ իրենց հոգեւոր առաջնորդաց կողմէ՛ որոնք կա՛մ բնաւ չէին քններ անոր նուիրական էջերը, կամ իրենց քննութիւնը եկեղեցիին հաստատած վարդապետութեանց անձուկ սահմաններուն մէջ պարփակելով կը բաւականանային, մինչդեռ խուժանին մէջ կը տարածէին իրենց աղօթագրքերն ու վարք սրբոցները՝ Աստուծոյ կենդանի պատգամներուն տեղ. . . : Այս պատճառաւ վերեւ ակնարկուած խոստմունքը տրուած է թէ՛ վախճանին մօտ նոր և աճած զիտութիւնը պիտի յանկարծ երեւան զար մարգարէական գրքերէն, թէ՛ և անոնք այնքան երկար ատեն աւանդուեր էին Աստուծոյ զաւակներուն : Հազարաւոր տարիներ առաջուց՝ վերջին սերունդին հանդէպ Աստուծոյ երկայնմտութիւնը և ողորմութիւնը զի՛նքը մղեր էին մարգարէական խոր-

հրդանշաններ գործածելու՝ լոյսի առատութիւնը գրել տալով մեր օրերուն համար, ու զԱնի մղեր էին նաև հայթայթելու անոնց մեկնութեանն համար անհրաժեշտ բանալին: Ո՛վ որ պիտի հետեւի Անոր խորհուրդին՝ և ջանքով քննէ այս մարգարէութիւնները՝ պիտի օրհնուի այն գիտութիւնով որ զինքը կարող պիտի ընէ պատրաստուելու Տէրոջը վերահաս օրուանը համար:

Մարգարէական խորհրդանշանք ի հնումն կը հասկցուէին: Աստուած Բարեւոյնի թագաւորին տուաւ երազ մը՝ իմացնելով անոր Վինչ որ ասկէ ետքը պիտի ըլլայ» (Դան. Բ. 29): Թէպէտ սոսկ հեթանոս վեհապետ մը, սակայն հանգիստ չեղաւ ան մինչեւ Բարձրելոյն մարգարէն հաղորդեց իրեն երազին մեկնութիւնը զոր Տէրը Իր ծառային շնորհեր էր՝ ի պատասխան անոր ջերմեռանդ ազօթքին: Տեսիլքին մէջ նշանագրական պատկերներ նաև գործածուեր էին — իսկական «սրբազան գրութիւնք», ոչ թէ հեթանոս քուրմերունը, այլ մանաւանդ կենդանի Աստուծոյնը: Նարուզոգոնոսոր տեսաւ «մեծ արձան մը... որուն երեւոյթը ահաւոր էր: Այս արձանին գլուխը զուտ ոսկիէ, անոր կուրծքը և թեւերը արծաթէ, մէջքը ու ազդրերը պղնձէ, սրունքները երկաթէ, ու ոտքերուն մէկ մասը՝ երկաթէ ու մէկ մասը կաւէ էր. դուն կը տեսնէիր՝ մինչեւ որ մէկ քար մը կտրուեցաւ առանց ձեռքի, ու այն արձանին երկաթէ ու կաւէ ոտքերուն զարկաւ, ու զանոնք փչրեց: Այն ատեն երկաթը, կաւը, պղինձը, արծաթը ու ոսկին մէկտեղ փչրուեցան, և ամառուան կալերուն մղեղին պէս եղան. ու հովը զանոնք տարաւ, ու ամենեւին անոնց տեղ մը չզտնուեցաւ. բայց արձանը զարնող քարը մեծ լեռ մը եղաւ, ու բոլոր երկիրը լեցուց» (Դան. Բ. 31—35): Չը նայելով այս մէկ քանի խորհրդանշանաց պարզութեանը, անոնք պատշաճօրէն կը ներկայացնեն ամբողջ ընթացքն այս աշխարհի պատմութեան՝ մամանակի և յախտենութեան մէջ: Մեկնութիւնը կամ բանալին կը գտնուի հետագայ 36—45 համարներուն

մէջ, Ոսկի գլուխը Բաբելոնի թագաւորն ինքն էր, և ըստ որում Նաբուգոդոնոսոր Բաբելոնի տիեզերական կայսրութեան բուն հիմնադիրն ու մարմնացումն էր, իրաւամբ կրնար անոր ներկայացուցիչը կոչուիլ. «Այն ոսկի գլուխը դուն ես» Հմբ. 38: Բաբելոն «թագաւորութիւններու փառքը՝ և Քաղզէացւոց փառաւորութեանը պարծանքն» էր, Ես. ԺԳ. 19: Բաբելոնի պիտի յաջորդէր մէկ ուրիշ նուազ զօրաւոր թագաւորութիւն մը, Մար-Պարսկականը (Ն. Ք. զՔր. 538—331) խորհրդանիշուած արծաթէ կուրծքով և թեւերով, և «պղնձէ մէկ ուրիշ երրորդ թագաւորութիւն մը, որ բոլոր երկրին պիտի տիրէ» Ասի Մակեդոնական կամ Յունական ընդհանուր կայսրութիւնն էր, որ այնքան արագօրէն տարածուեցաւ աշխարհի վրայ՝ Մեծն Աղեքսանդրի օրով: Երկրորդ և երրորդ տիեզերական իշխանութիւնք իրենց անուններով յիշուած են Դան. Ը. 20, 21ի մէջ, այնպէս որ ու է տարակոյս չի մնար մեկնութեան ճշգրտութեանը մասին: Չորրորդ թագաւորութիւնը, երկաթէ սրունքներով խորհրդանիշուած՝ երկաթի պէս պիտի փշրէր ու փսօրէր Ապա երկաթը կաւին հետ խառնուեցաւ, որ կը ցուցնէր ուրիշ ժողովուրդներու խառնուրդ մը, և, վերջապէս թագաւորութիւնը պիտի բաժնուէր տասը մասանց՝ որոնք արձանին մասններովը կը ցուցուին, — իրաց կացութիւն մը որ պիտի տեսէր՝ մինչեւ երկրաւոր ամէն իշխանութիւն ջնջուէր Աստուծոյ յաւիտենական թագաւորութեան հաստատուելովը: Չորրորդը, կամ երկաթէ թագաւորութիւնը, պէտք է յաջորդն ըլլայ Յունական ընդհանուր կայսրութեան, և անոր մասերը պէտք է երեւան իրրեւ տասը անկախ տէրութիւնք՝ աշխարհացոյց քարտէսին վրայ: Հռովմէական կայսրութիւնն՝ ու ան միայն՝ կը պատասխանէ մարգարէութեան հանգամանքներուն իրրեւ չորրորդ տիեզերական կայսրութիւն: Հռովմ՝ երկաթէ ձեռքով մը իշխեց աշխարհի Ն. Ք. զՔր. 161էն մինչեւ Յ. Տ. 476, երբ՝ երկաթախառն կաւով խորհրդանիշուած Գերման Բարբարոսաց հրոսա-

խումբերուն արշաւանքը բաժնեց չորրորդ փեղեկեղան կայսրութիւնը տասը փոքրագոյն թագաւորութեանց, որ մինչև հիմա գոյութիւն ունին իրրեւ տասը պետու-



ԴԱՆ. Բ.Ի ՆՍԿԱՅ ԱՐՁԱՆԸ

թիւնք Եւրոպիոյ — Գերմանիա, Աւստրո-Հունգարիա, Անգղիա, Ֆրանսա, Իտալիա, Սպանիա, Բորթուկալ, Զուիցերիա, Հոլանտա եւ Պելճիգա: Անոնք հաստատու-

ուած են հին Հռովմէական կայսրութեան արեւմտեան մասին մէջ : Անոնց մէջ ամենուրեք կը գտնուի հին Հռովմայ իսկութիւնը — երկաթի զօրութիւնը : Արդի այս պետութիւնք Հռովմէն ծագեցան, որպէս Լուտեր հաստատեց — «Ճիշդ ինչպէս մարդկային մարմնոյն ոտնամատները կը զարգանան անջատ ոտքէն՝ որուն կը պատկանին, նոյնպէս բաժնուեցաւ Հռովմէական կայսրութիւնը, երբ Սպանիա, Ֆրանսա, Անգղիա և ուրիշ մասեր զարգացեր էին : Բայց այսու ամենայնիւ ան աճեցաւ, և տեղափոխուեցաւ ինչպէս ծառ մը՝ Հոռոմներէն Գերմաններուն, այնպէս որ երկաթակերպ ձեւը կը մնայ, քանզի իրենց կարգադրութիւնք, պաշտօնք, արդարութեան ձեւերն ու օրէնքները պահպանուած են որպէս էին հին ժամանակները : Դարերով Գերման կայսրութիւնը չճանչցաւ աւելի մեծ պատիւ քան «Սուրբ Հռովմէական կայսրութիւն» յորջորջուելու պատիւը, ու մինչև այսօր՝ անոր ռազմական սիստեմը անդրդուելի է որպէս էր անոնցինը : Թէպէտ այս ազգութիւնք՝ իրենց իշխանազուն ընտանեաց միջնամուսնութեամբը «մարդոց սերունդին հետ» են խառնուեր՝ մինչև բոլոր Եւրոպական արքունի գերդաստանք աւելի կամ նուազ խնամի են եղած, սակայն և այնպէս՝ անոնք իրարու չեն փակչիր . . . և Եւրոպա՝ ընդարձակ ռազմական բանակեացի մը երեւոյթը կ'ընծայէ՝ խաղաղութեան պահպանման համար . . . Հիմա մենք դէմ առ դէմ կը գտնուինք Աստուծոյ երկնային թագաւորութեան որ պիտի հաստատուի «այս թագաւորներուն օրերը» — այսինքն՝ վերոյիշեալ տասը թագաւորութեանց ատեն : Հազար չորս հարիւր տարիէ ի վեր գոյութիւն ունեցող՝ արձանին մասներովը ներկայացուած թագաւորութեանց օրով ապրեր ենք, այնպէս որ, ինչպէս Կանոնիկոս Միւնէ իրաւամբ կ'ըսէ, «Ուստի վախճանին շատ մօտ պէտք է ըլլանք : Ասի ամենէն՝ վճռական ապացոյցը կ'երեւայ ինձի վախճանին մօտաւորութեանը :» «Նրազը ճշմարիտ է, և անոր մեկնութիւնը հաւատարիմ :» Դան . Բ . 45 :

Յիրաւի, Տէրն Ինքը պատին վրայ գրեց՝ խորհրդաւոր նշանագրերով՝ բազդը ամբարիշտ Բաղասասարին — «Մենէ, Մենէ, Թէքէլ, Ու Փարսին», զոր Դանիէլ անմիջապէս մեկնեց և որոնք այն գիշերն իսկ կատարուեցան: Նոյն իսկ մինչև այսօր՝ «Մենէ, Մենէ, Թէքէլ» բառերը կը մնան Բաբելոնի որմերուն վրայ, կարծես հրեղէն տառերով քանդակուած — ազդարարութիւն մը աշխարհի ուղղուած. «ո՛վ որ իմաստուն է, թող հասկընայ»: Երբ Յիսուս, մարգարէից «Մարգարէն», հոս երկրիս վրայ էր, Իր աշակերտներուն ուշադրութիւնը դարձուց Դանիէլի մարգարէութեան, Երուսաղէմի մօտալուտ կործանման մասին խօսած ատեն, «Ուստի երբոր տեսնէք աւերմունքի պղծութիւնը որ Դանիէլ մարգարէին ձեռքովը ըսուած է թէ 'սուրբ տեղը կը կենայ', (ո՛վ որ կարդայ, թող հասկնայ,) այն ատեն Հրէաստանի մէջ եղողները լեռները թող փախչին»: Մատթ. ԻԳ. 15, 16: Դանիէլի գուշակած «աւերմունքի պղծութիւնը», հետեւաբար, պիտի Երուսաղէմի պատահէր այս ժամանակէն վերջ: Անողոք Հռովմայ տիեզերական կայսրութիւնը որ երկաթի պէս պիտի ամէն ինչ փսփոքէր, այս «աւերմունքի պղծութիւնն» է, որ այնքան ամբողջապէս պիտի կործանէր Երուսաղէմը՝ որ հազիւ քար մը քարի վրայ թողուր... Աշխարհի պատմութիւնը հազիւ ուրեք կը ներկայացնէ ուրիշ օրինակ մը այսպիսի դատաստանի որ ի գործ դրուած ըլլայ ու է ժողովուրդի վրայ՝ որպէս տրուած է Երուսաղէմի կործանմամբն Հռովմայեցւոց ձեռքով: Այսպէս՝ Տէրը մեզի համար մեկներ է շորթորդ տիեզերական իշխանութիւնը ամենատրոյ եղանակաւ: Երբ Հռովմայ կայսրութեան զօրքերը քաղաքը պաշարել եկան, «իմաստուն»ները հասկցան որ անոր կործանման ժամանակը մօտ էր ու անձերնին ազատեցին՝ խոյս տալով Յորդանանէն անդին Բելլա քաղաքը, մինչդեռ՝ մարգարէական խօսքերուն ուշադիր ըլլալու մէջ իմաստուն չեղողները կեանքերնին կորուսին քաղաքին կործանման մէջ: Դան. Թ. 26: Դուկ. ԻԱ. 20:

Բայց եթէ մարգարէական խօսքն օգտակար է եղած ոչ միայն Տէրօջը աշակերտներուն այլ և հեթանոս վեհապետներու՝ անցեալին մէջ, կրնանք զայն օգտակար նկատել նոյն իսկ աւելի մեծ չափով մը՝ վերջին ժամանակին մէջ: Գիտութիւնը պիտի բ՛ռն այս ատենս ածէր աւելի քան երբէք: Ի մէջ բազմաթիւ վկայութեանց որ կրնային յառաջ դալ ցոյց տալու ինչպէս մարգարէութիւնը կատարուած է մեր օրով, նախ պիտի դիմենք պատմագիր Բանքէի վկայութեանը, «Մեր դարը, կ'ըսէ ան, կը յատկանիշուի հանրային հսկայ շահեկանութեամբ մը՝ հոգեւոր կեանքի մէջ, մեծապէս ընդարձակուած գիտութեամբ, և կենդանի շահեկանութեամբ մը՝ հասարակական գործոց մէջ: Մէկը պէտք չէ սխալ հասկնայ մեր դարը» — Պոս. Աշխարհի, Հաս. Թ. 2, 235: Կանոնիկոս Միւհէ՛ նաև կ'ըսէ, «Ս. Հոգին ինքզինքին թոյլ շտուաւ պարփակուիլ ԺԶ. դարուն սահմաններուն մէջ: Ան պէտք էր առաջնորդէր Քրիստոսի եկեղեցին ամէն ճշմարտութեան: Ան, որ տակաւ մարգարէութիւններն հաղորդեր էր մարդուն՝ նաև քիչ քիչ պարզեր էր դանոնք անոր մտքին:» «Յայտնութեան ա՛յնքան բազմաթիւ արժանահաւատ մեկնութիւնք երբէք ի յայտ չեկան ինչպէս մեր դարուն մէջ: Ըստ Դան. ԺԲ. 4ի, Յովէլ Գ. 1ի, և Գործք Առաքելոց Բ. 17ի՝ ասի նաև նշան մըն է թէ մեր դարը վերջինն է:» — Վախճանը մօ՛տ Ե, էջք 6, 19: Կը վերջացնենք Միսիօնարական Տնօրէն Կինէսի խօսքերովը. «Լոյսը տակաւ ծագեցաւ՝ երբ պատմութիւնը սկսաւ կատարել մարգարէութիւնները. կատարման ամէն մէկ աստիճան մարգարէութեանց իմաստը աւելի յստակ ըրած է, և Բարեկարգութենէն ի վեր ճշմարիտ գիտութեան մէջ յառաջգիմութիւնը ամուր և արագ է եղած: Հիմա, այս վերջին ժամանակին փակմանը մէջ, մթութեան ամպերը կատարելապէս փարատած են. դէպքերու ամբողջ ձեւն ու կարգը, պետութեանց յաջորդութիւնը, ժամանակագրութեանց սահմանք, չափելու կանոնք, գործադրմանց բնութիւնը,

ամէնք դարձած են, իրողութեանց և հանգիստութեանց միացեալ լոյսովը, այնքան պայծառ՝ որ ուղողը կարենայ դիւրաւ կարգաւ :» — Լոյս վերջին օրերու համար, էջ 250 :

Թէ Տէրը մասնաւոր տեսիլքներ տուած է այս վերջին ժամանակին համար՝ յայտնի է Դան. Ը. 17—19 համարներէն. « Հասկցիր, որդի մարդոյ, որ այս տեսիլքը վերջին ժամանակին համար է. . . . Ահա քեզի կ'իմացնեմ բարկութեան վերջը ինչ ըլլալիքը. վասն զի այս տեսիլքը վերջին ժամանակին համար է :»

Ընթերցող, կ'ուզե՞ս աւելի բան գիտնալ վերջին ժամանակին նկատմամբ, կ'ուզե՞ս քակել ինչ որ Աստուած գրել տուած է մարգարէական խորհրդանշանաց սուրբ լեզուովը : Կ'ուզե՞ս նաև ունենալ Ռօզէթթայի քար մը՝ զքեզ հմուտ ընելու համար կարգաւու մէջ մասնաւորապէս Դանիէլի և Յայտնութեան մարգարէութիւնները : Ասի տրուած է քեզ, զայն ունիս դուն և եթէ չունիս, կրնաս զայն ձեռք ձգել շատ չնչին գնով մը : Ընդունէ՛ առաջարկը, ա՛ռ Աստուծոյ խօսքը, և քննէ՛ զայն խնամով և ջերմեռանդ ազօթքով : Եթէ կրնանք օգնել քեզ ուզիդ հասկցողութեանը մէջ այս նիւթերուն որ աւելի մեծ կարեւորութիւն ունին քան ուրիշ ու է բան, ըլլայ այս՝ կամ ուրիշ հրատարակութեանց միջոցաւ, հաճոյքով պիտի օգնենք քեզ :

Ու երբ այդ հրատարակութիւնք զքեզ մզնն Աստուծոյ խօսքին աւելի խորունկ մէկ քննութեանը, և մարգարէական գրքերը հասկնալու բանալին ստանալու ի վիճակի ընեն զքեզ, այն ատեն զԱստուած փառաւորէ և ոչ թէ զմարդ : Ուշի ուշով քննէ աստուածային ծածկեալ գանձերը իբրև մէկը որ «իմաստուն» է, ու երբ Աստուած յաջողութեամբ պսակէ Ս. Գիրքը կարգաւու ջանքերդ, յայնժամ ուշադիր եղիր անոր սրբազան վարդապետութեանց : Ամէն մարդ կրնայ մեծ իմաստութիւն գտնել Ս. Գրոց մէջ, ու այդ իմաստութիւնը լլայ զքեզ մաքրելու և հաստատելու համար Աստուծոյ յախտենական թաքնդ ձեռքը՝ պիտի հաստատուի և մնայ

Ս. ԳՐՈՒԹՅԱՆ ԲՈՆԵՐԱՍԻ



